ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«30» մարտի 2015 թ. N 80-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 111-Ն որոշումը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2015 թվականի գերակա խնդիրները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Նախարարի տեղակալներին, նախարարության աշխատակազմի ղեկավարին, նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին՝ ապահովել սույն հրամանով հաստատված N 1 և N 2 հավելվածներում նախատեսված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը:

3. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետին՝

1) ապահովել սույն հրամանով հաստատված N 1 հավելվածում ներառված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը,

2) ապահովել սույն հրամանով հաստատված N 2 հավելվածում ներառված գերակա խնդիրների սահմանված ժամկետներում կատարումը,

3) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 2-ը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2011 թվականի հունվարի 31-ի N 10-Ա հրամանով հաստատված հաշվետվության ձևին համապատասխան՝ ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2015 թվականի գործունեության միջոցառումների և գերակա խնդիրների իրականացման ընթացքի մասին:

4. Նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 2-ը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2011 թվականի հունվարի 31-ի N 10-Ա հրամանով հաստատված հաշվետվության ձևին համապատասխան՝ նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2015 թվականի գործունեության միջոցառումների և գերակա խնդիրների իրականացման ընթացքի մասին:

5. Սույն հրամանի 2-րդ և 3-րդ կետի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին:

6. Սույն հրամանի 4-րդ կետի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ գյուղատնտեսության նախարարի
2015թ. մարտի 30-ի N 80-Ա հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողը			Ներկայացման ժամկետը		Համակատարողը
		Նախարարի տեղակալ	Ստորաբաժանումը, կազմակերպությունը	Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար	Նախարարի քննարկմանը	ՀՀ կառավարություն	
1. (14) «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2015 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հանքային պարարտանյութերի մատչելիության բարձրացման արդյունքում՝ 1) գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության ագրոտեխնիկական պահանջների կատարման համար. 2) կբարձրանան գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը և արտադրության արդյունավետությունը, կավելանան արտադրության ծավալները. 3) կբարձրանան բուսաբուծական մթերքների մրցունակությունը և ինքնաբավության մակարդակը. 4) պայմաններ կստեղծվեն հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման համար:	Ս. Գալստյան	Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն	Կ. Եսայան	2015թ. հունվարի 2-րդ տասնօրյակ	2015թ. մարտի 3-րդ տասնօրյակ	

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողը			Ներկայացման ժամկետը		Համակատա-ռողը
		Նախարարի տեղակալ	Ստորաբաժանումը, կազմակերպու-թյունը	Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար	Նախարարի քննարկմանը	ՀՀ կառավա-ություն	
2. (15) «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2015 թվականի գյուղա-տնտեսական աշխա-տանքների համար մատչելի գներով դիզե-լային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցու-թյան ծրագիրը հաստա-տելու մասին» ՀՀ կառա-վարության որոշման նախագիծը ՀՀ կառա-վարություն ներկայաց-նելը	դիզելային վառելանյութի ձեռքբերման մատչելիու-թյան բարձրացման արդյունքում՝ 1) գյուղատնտեսությու-նում տնտեսավարող-ների համար պայման-ներ կստեղծվեն գյուղա-տնտեսական աշխա-տանքներն ագրոտեխնի-կական ժամկետներում կատարելու համար. 2) կբարձրանա գյուղա-տնտեսական հողերի նպատակային օգտա-գործման մակարդակը. 3) կբարձրանա գյուղա-տնտեսական մթերքների մրցունակությունը և կավելանան տնտեսա-վարողների եկամուտ-ները. 4) պայմաններ կստեղծ-վեն գյուղատնտեսական մթերքների արտադրու-թյան ծավալների ավե-լացման և ինքնաբա-վության մակարդակի բարձրացման համար:	Ս. Գալստյան	Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն	Կ. Եսայան	2015թ. հունվարի 2-րդ տասնօրյակ	2015թ. մարտի 3-րդ տասնօրյակ	

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողը			Ներկայացման ժամկետը		Համակատարողը
		Նախարարի տեղակալ	Ստորաբաժանումը, կազմակերպությունը	Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար	Նախարարի քննարկմանը	ՀՀ կառավարություն	
3. (16) «Պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրությանը և շրջանառությանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի N 1899-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Կսահմանվեն պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրությանը և շրջանառությանը ներկայացվող պահանջները	Ա. Հարությունյան	Սննդամթերքի անվտանգության բաժին	Ա. Շիրվանյան	2015թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	2015թ. մայիսի 2-րդ տասնօրյակ	ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն **(առաջին կատարող)** ՀՀ առողջապահության նախարարություն **(համակատարող)**
4. (17) «Հատատեղերի հատկացման և տեղաբաշխման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Նախագծի ընդունմամբ հնարավորություն կընձեռվի խուսափել կամ հնարավորինս նվազագույնի հասցնել հատատեղերի հատկացման անճշտությունները:	Գ. Բաղիյան	Անտառային տնտեսության բաժին	Ա. Պետրոսյան	2015թ. մայիսի 2-րդ տասնօրյակ	2015թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողը			Ներկայացման ժամկետը		Համակատա-ռողը
		Նախարարի տեղակալ	Ստորաբաժանումը, կազմակերպու-թյունը	Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար	Նախարարի քննարկմանը	ՀՀ կառավա-ռություն	
5. (18) «Կաթի և կաթնամթերքի անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Կսահմանվեն կաթի և կաթնամթերքի որակին և անվտանգությանը ներկայացվող պարտադիր պահանջները, կբացառվեն Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներ արտադրանքի արտահանման խոչընդոտները, կավելանան արտադրության և արտահանման ծավալները:	Ռ. Մակարյան	Ագրովերամշակման զարգացման վարչություն	Գ. Ղազարյան	2015թ. հունիսի 2-րդ տասնօրյակ	2015թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
6. (19) «Ձեթի և ճարպի արտադրանքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Կսահմանվեն ձեթի և ճարպի որակին ու անվտանգությանը ներկայացվող պարտադիր պահանջները, կբացառվեն Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից արտադրանքի ներմուծման խոչընդոտները:	Ռ. Մակարյան	Ագրովերամշակման զարգացման վարչություն	Գ. Ղազարյան	2015թ. հունիսի 2-րդ տասնօրյակ	2015թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողը			Ներկայացման ժամկետը		Համակատա-ռողը
		Նախարարի տեղակալ	Ստորաբաժանումը, կազմակերպու-թյունը	Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար	Նախարարի քննարկմանը	ՀՀ կառավա-ռություն	
7. (20) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի N 993-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Միջազգային սկզբունքներին և փորձին համապատասխան՝ կվերանայվեն սպանդի կազմակերպմանը և իրականացմանը ներկայացվող պահանջները:	Ա. Հարությունյան	Սննդամթերքի անվտանգության բաժին	Ա. Շիրվանյան	2015թ. օգոստոսի 2-րդ տասնօրյակ	2015թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն **(առաջին կատարող)**
8. (21) «Անասնաբուժական վերահսկողության իրականացման միասնական ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Ամբողջական և հստակ կսահմանվի մաքսային միասնական տարածքում անասնաբուժական վերահսկողության իրականացման միասնական ընթացակարգը:	Գ. Բաղիյան	Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն	Բ. Կղմեսյան	2015թ. օգոստոսի 2-րդ տասնօրյակ	2015թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն **(առաջին կատարող)**

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողը			Ներկայացման ժամկետը		Համակատա- րողը
		Նախարարի տեղակալ	Ստորաբաժանումը, կազմակերպու- թյունը	Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար	Նախարարի քննարկմանը	ՀՀ կառավա- ություն	
9. (22) «Մրգային և բան- ջարեղենային հյութերի տեխնիկական կանոնա- կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավա- ության որոշման նախագիծը ՀՀ կառա- վարություն ներկայաց- նելը	Կսահմանվեն մրգային և բանջարեղենային հյութե- ի որակին ու անվտան- գությանը ներկայացվող պարտադիր պահանջ- ները, կբացառվեն Եվրա- սիական տնտեսական միության անդամ երկր- ներ արտադրանքի արտահանման խոչընդոտները, կավելանան արտադրության և արտահանման ծավալ- ները:	Ռ. Մակարյան	Ագրովերամշակ- ման զարգացման վարչություն	Գ. Ղազարյան	2015թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ	2015թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ էկոնոմիկայի նախարարու- թյուն

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողը			Ներկայացման ժամկետը		Համակատա-ռողը
		Նախարարի տեղակալ	Ստորաբաժանումը, կազմակերպու-թյունը	Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար	Նախարարի քննարկմանը	ՀՀ կառավա-ռություն	
10. (23) «Գյուղատնտե-սական կոոպերատիվ-ների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառա-վարություն ներկայաց-նելը	Ներկայումս գործող օրենսդրությամբ չի կար-գավորվում գյուղատնտե-սական կոոպերատիվ-ների հետ կապված մի շարք հարաբերություն-ներ: Այն, մասնա-վորապես, վերաբերում է գյուղատնտեսական կոոպերատիվների հիմ-նական հասկացություն-ների իրավական հստա-կեցմանը, կոոպերատիվ-ների միջազգային դաշին-քի սկզբունքներին, կոոպե-ռատիվների տեսակներին, կոոպերատիվների միու-թյունների առանձնահատ-կություններին, կոոպերա-տիվի շահույթի և ավելցու-կի գոյացման ու դրանց բաշխման հարաբերու-թյուններին, պետություն-կոոպերատիվ հարաբերու-թյուններին և այլն: Նախագծի ընդունումից ակնկալվում են հետևյալ արդյունքները՝ 1) կբարելավվեն գյուղա-տնտեսական կոոպերա-ցիայի զարգացման օրենս-դրական հիմքերը.	Ա. Հարությունյան	Գյուղատնտեսա-կան կոոպերա-ցիային աջակ-ցության բաժին Գյուղատնտեսու-թյան զարգացման ծրագրերի վարչություն	Մ. Խաչատրյան Հ. Ծպնեցյան	2015թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ	2015թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողը			Ներկայացման ժամկետը		Համակատա-ռողը
		Նախարարի տեղակալ	Ստորաբաժանումը, կազմակերպու-թյունը	Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար	Նախարարի քննարկմանը	ՀՀ կառավա-ռություն	
	2) կիստակեցվեն գյուղա-տնտեսական կոոպերա-ցիայի զարգացման բնա-գավառում պետական քաղաքականության հիմ-նական ուղղությունները. 3) գյուղացիական տնտե-սությունների արտադրա-կան , մատակարարման, իրացման և այլ խնդիր-ների համատեղ լուծման արդյունքում կբարձրանա գյուղացիական տնտեսու-թյունների գործունեության արդյունավետությունը. 4) կբարձրանա երկրի պարենային անվտանգու-թյան մակարդակը:						
11. (24) «Հացահատիկի անվտանգության տեխ-նիկական կանոնա-կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավա-րության որոշման նախագիծը ՀՀ կառա-վարություն ներկայաց-նելը	Կսահմանվեն հացահա-տիկի որակային հատ-կանիշներին և ան-վտանգությանը ներ-կայացվող պարտադիր պահանջները, կբացառ-վեն Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից ցորենի ներմուծման խոչընդոտները:	Ս. Գալստյան	Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն	Կ. Եսայան	2015թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ	2015թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ էկոնոմիկայի նախարարու-թյուն

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողը			Ներկայացման ժամկետը		Համակատա-ռողը
		Նախարարի տեղակալ	Ստորաբաժանումը, կազմակերպու-թյունը	Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար	Նախարարի քննարկմանը	ՀՀ կառավա-ռություն	
12. (25) «Մսի և մսամթերքի անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Կսահմանվեն մսի և մսամթերքի որակին և անվտանգությանը ներկայացվող պարտադիր պահանջները, կբացառվեն Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներ արտադրանքի արտահանման խոչընդոտները, կավելանան արտադրության և արտահանման ծավալները:	Ռ. Մակարյան	Ագրովերամշակման զարգացման վարչություն	Գ. Ղազարյան	2015թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ	2015թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողը			Ներկայացման ժամկետը		Համակատարողը
		Նախարարի տեղակալ	Ստորաբաժանումը, կազմակերպությունը	Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար	Նախարարի քննարկմանը	ՀՀ կառավարություն	
13. (26) «Կերի շղթայի օպերատորի գործունեության վերաբերյալ եզրակացություն տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Կսահմանվի կերի շղթայում գործող օպերատորի գործունեության իրականացման համար եզրակացություն տալու կարգը:	Ա. Հարությունյան	Սննդամթերքի անվտանգության բաժին	Ա. Շիրվանյան	2015թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	2015թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն **(առաջին կատարող)** ՀՀ առողջապահության նախարարություն **(համակատարող)** ՀՀ էկոնոմիկայի նախարարություն **(համակատարող)**

Հավելված 2
ՀՀ գյուղատնտեսության նախարարի
2015 թ. մարտի 30-ի N 80-Ա հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

Գերակա խնդիրը	Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը	Պատասխանատու կատարողը			Կատարման ժամկետը
		Նախարարի տեղակալ	Ստորաբաժանումը, կազմակերպությունը	Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար	
1. (11) Գյուղատնտեսական կենդանիների տոհմամթերատու հատկանիշների կատարելագործմանն ուղղված լայնածավալ տոհմասելեկցիոն գործընթացի շարունակականության ապահովում	- տեղական վերարտադրության տոհմային երինջների ձեռքբերում և գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրում, զուգահեռ արտերկրից տոհմային երինջների ներկրում, - կովերի արհեստական սերմնավորման ծավալների ընդլայնում մինչև 20 հազարի, - ներկրված և տեղական վերարտադրությունից ստացված կենդանիներից տարեկան լրացուցիչ 350-400 գլուխ բարձրարժեք սերնդի ստացում և գյուղացիական տնտեսությունների նախիրների համալրում	Գ. Բաղիյան	Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն	Բ. Կղմեսյան	2015թ. ընթացքում

Գերակա խնդիրը	Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը	Պատասխանատու կատարողը			Կատարման ժամկետը
		Նախարարի տեղակալ	Ստորաբաժանումը, կազմակերպությունը	Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար	
2. (12) Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության վիճակի բարելավում	- գյուղատնտեսական հողատեսքերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացում, գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացում շուրջ 10 հազար հեկտարով, - գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնապահովության ծրագրի իրականացում, հացահատիկային և կերային մշակաբույսերի նկատմամբ ՀՀ մարզերի պահանջարկի ապահովում, - գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի (1-2%) և կենդանական ծագման մթերքների արտադրության ծավալների (4-5%) աճի ապահովում, - արդյունագործական ձկնաբուծության խթանում և ձկան արտադրության ծավալների ավելացում (15-20%)՝ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ, - գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում գյուղատնտեսական ուղղվածության շուրջ 30 կոպերատիվի ձևավորում	Ս. Գալստյան Գ. Բաղիյան Գ. Պետրոսյան Ա. Հարությունյան	Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն Գիտական և գյուղատնտեսության աջակցության կենտրոնների համակարգման բաժին Գյուղատնտեսական կոոպերացիային աջակցության բաժին «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ԾԻԳ ՊՀ	Կ. Եսայան Բ. Կղմեսյան Է. Հակոբյան Մ. Խաչատրյան Գ. Խաչատրյան	2015թ. ընթացքում

Գերակա խնդիրը	Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը	Պատասխանատու կատարողը			Կատարման ժամկետը
		Նախարարի տեղակալ	Ստորաբաժանումը, կազմակերպությունը	Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար	
3. (13) Անասնապահության մասնագիտացում ունեցող գյուղական համայնքներին աջակցության ընդլայնում	- հեռագնա արոտների անցանելիության ապահովմանը, ջրարբիացմանը, արոտների վերականգնմանն ուղղված միջոցառումների շարունակում, - համայնքներում արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվների ձևավորում և ստեղծված արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվների կարողությունների հզորացմանն ուղղված միջոցառումների իրականացում: Կոոպերատիվներին կտրամադրվի 150 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որից 25-ն անվավոր տրակտոր, - ՀՀ մարզերում համապատասխան սարքավորումներով հագեցված անասնաբուժական սպասարկման 2 կենտրոնի հիմնում, - տոհմային և անասնաբուժական աշխատանքների բարելավման միջոցառումների շարունակում, - իրականացվող միջոցառումներում նոր մարզերի (ՀՀ Կոտայքի և ՀՀ Վայոց ձորի) ընդգրկում		«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ԾԻԳ ՊՀ	Գ. Խաչատրյան	2015թ. ընթացքում
4. (14) Ձկան և մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության մոնիթորինգային ծրագրի իրականացում	- ձկան մեջ մնացորդային նյութերի հսկողության մոնիթորինգային պլանի կազմում, - մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության մոնիթորինգային պլանի կազմում, - սահմանված կարգով նմուշառում և նմուշների ներկայացում լաբորատոր փորձաքննության, - մնացորդային նյութերի բացահայտման և հաստատման լաբորատոր հետազոտությունների իրականացում	Ա. Հարությունյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն **(առաջին կատարող)** Սննդամթերքի անվտանգության բաժին	Ա. Շիրվանյան	2015թ. ընթացքում

Գերակա խնդիրը	Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը	Պատասխանատու կատարողը			Կատարման ժամկետը
		Նախարարի տեղակալ	Ստորաբաժանումը, կազմակերպությունը	Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար	
5. (15) Բուսասանիտարական համակարգի բարելավման և մասնագիտական գիտելիքների բարձրացման ծրագրի իրականացում, բուսասանիտարական հաշվառում	- բույսերի վնասակար օրգանիզմների հայտնաբերման, նույնականացման և լաբորատոր փորձաքննության մակարդակի բարձացման նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության բուսասանիտարական մասնագետների ուսուցում, - գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց բուսասանիտարական հաշվառում, - բուսասանիտարական հսկողության կազմակերպման և բուսասանիտարական իրավիճակի գնահատման նպատակով բուսասանիտարիայի բնագավառում հաշվառման ենթակա տվյալների հավաքագրում, դասակարգում, պահպանում, բազայի ստեղծում և վարում	Ա. Հարությունյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն **(առաջին կատարող)** Սննդամթերքի անվտանգության բաժին	Ա. Շիրվանյան	2015թ. ընթացքում